ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՇՈՒՄ Գիտակրթական կենտրոն ՀԿ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Աշակերտների կարողունակությունների զարգացումը փոխադրություն գրելու ժամանակ

Կատարող՝ **Սոնյա Մելոյան Մելիքի**

« Գյումրու թիվ 27 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Հայոց լեզու և գրականություն

I – ին խումբ

Ղեկավար՝ **Կարինե Ալեքսանյան**

ԳՅՈՒՄՐԻ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Աշակերտների կարողունակությունների զարգացումը փոխադրություն գրելու ժամանակ 6

Եզրակացություն 28

Օգտագործված գրականության ցանկ 29

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Փոխադրությունը մայրենիի ուսուցման համակարգում կարևորագույն միավոր է, որն օգնում է դպրոցականների կապակցված խոսքի, ուշադրության և մտածողության զարգացմանը, հարստացնում է աշակերտների խոսքը: Այն պայմանավորված է սովորողների խոսքի առանձնահատկություններով, մտածողության տեսակներով և մայրենիի առարկայական ծրագրի պահանջներով. ուսուցումը նպատակաուղղված է աշակերտի լեզվամտածողության և տրամաբանության հիմքերի, ուսումնառության և աշխատանքային հմտությունների ձևավորմանը:

Դեռևս նախադպրոցական տարիքում երեխաները ազատ, անկաշկանդ արտահայտում են իրենց մտքերը, անգամ համարձակ դատողություններ են անում ու գնահատում միջավայրում տեղի ունեցող դեպքերն ու երևույթները: Սակայն աստիճանաբար այդ դատողությունները կարող են խամրել, եթե մայրենիի դասերի ժամանակ չկարևորվեն ինքնուրույն խոսք կառուցելու, ինքնատիպ մտածողության և դրանց համար անհրաժեշտ բառապաշար ,հավաքելուե աշխատանքները: Դպրոցի խնդիրն է օգնել երեխային՝ ճիշտ ձևակերպելու գրավոր և բանավոր խոսքը, արտահայտելու հույզերը, զգացմունքները ու հաղորդակցվելու՝ իր մտքերը հանձնելով թղթին՝ որպես կապակցված գրավոր խոսք:

Հետազոտության ընթացքում նկատել ենք, որ մայրենիի դասաժամերին տարաբնույթ աշխատանքների միջոցով ուսուցիչները ձգտում են համակողմանիորեն զարգացնել դպրոցականի թե՛ գրավոր, թե՛ բանավոր կապակցված խոսք ձևավորելու և զարգացնելու կարողունակություններն ու հմտությունները, սակայն փոխադրություններ այդքան էլ հաճախ չեն հանձնարարվում, և հիմնականում դժվարություն է առաջանում աշակերտների համար գրավորի այս տեսակը գրելը, ինչը կարող է պայմանավորված լինել տարբեր հանգամանքներում:

Հետազոտության նպատակը

Աշխատանքի նպատակն է փոխադրության միջոցով զարգացնել աշակերտի լեզվական գրագիտության (վարժ տիրապետել հայոց լեզվին), ինքնաճանաչողական, ժամանակի կառավարման հմտության և մշակութային քաղաքական կարողունակությունները:

Հետազոտության խնդիրներ: Հետազոտության նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել հիմնախնդրի վերաբերյալ մեթոդական գրականություն և դիտարկել նրանցում արծարծված հիմնական մոտեցումները:
- Հետազոտական աշխատանքի հիմնախնդրի տեսանկյունից դիտարկել մայրենիի չափորոշիչն ու առարկայական ծրագիրը, ինչպես նաև դասագրքերը:
- Դասալսումներ իրականացնել գործընկերների մոտ, իրականացնել փորձարարական դասեր, վերլուծել արդյունքները:

Փոխադրությունն իբրև գրավոր խոսքի տեսակ

Փոխադրությունները սովորողների խոսքի զարգացման հրաշալի միջոց են: Գրավորների այս տեսակը հարստացնում է աշակերտների խոսքը, զարգացնում է նրանց մտածողությունը և ուշադրությունը: Որպեսզի փոխադրություն գրելու գործընթացը զարգացնի սովորողների՝ կապակցված խոսք կառուցելու և այն գրի առնելու կարողունակությունները և ոչ թե դառնա ունկնդրածի մեխանիկական վերարտադրություն, փոխադրության համար ընտրված նյութի գաղափարը՝ հիմնական միտքը, աշակերտը պետք է հասկանա, զգա դեպքերի տրամաբանական կապերը և ,իր բառերով վերարտադրի:

Պետք է ձգտել, որ աշակերտը բնագրի որոշ բառեր, արտահայտություններ, մտքեր վերարտադրի՝ հարազատ մնալով հեղինակի ոճին և լեզվին: Բնագրի շուրջ տարվող մեթոդապես ճիշտ աշխատանքի միջոցով դրանք կդառնան աշակերտներինը՝ ապահովելով ինքնուրույնություն, սերմանելով ստեղծագործական գործունեության տարրեր: Փոխադրություն գրելիս կարևորելով երեխաների ստեղծագործական միտքը և վերլուծական մտածողությունը, այնուամենայնիվ, աշակերտները պետք է գործածեն այն բառերը, արտահայտությունները, որոնք տրված են խոսքի նմուշում և հանդիպում են առաջին անգամ, որպեսզի պահպանեն ստեղծագործության իմաստային առանձնահատկությունները, և նրանց խոսքը հարստանա դրանցով:

Փոխադրություն գրելիս հիմնական դժվարությունը ընկալած բովանդակությանը լեզվական այլ տեսք տալը, միևնույն միտքը այլ ձևով արտահայտելն է: Հայտնի է, որ աշակերտը կապակցված նյութի բովանդակությունն ավելի հեշտ է ընկալում, քան լեզվական ձևերը, որոնք նույնությամբ հիշել չի կարող, ուստի հարկադրված է միևնույն միտքը իր բառերով և լեզվամտածողությամբ արտահայտել, որի մեջ դրսևորվում է աշակերտի ինքնուրույնությունը:

Փոխադրության համար ընտրված բնագրերն աշակերտներին հասկանալի ու հետաքրքրական, պարզ ու հեշտ ընկալվող պատմվածքներ պետք է լինեն՝ թեմատիկայի տեսակետից ծանոթ: Աշակերտներին անծանոթ թեմաների շուրջ չի կարելի փոխադրություն տալ, որովհետև երկար ու մանրամասն բացատրությունները կարող են նրանց ուշադրությունը շեղել հիմնական նյութից: Սակայն թեմային ծանոթ

լինելու այս պահանջից չի կարելի եզրակացնել, թե փոխադրության համար կարելի է ընտրել դասագրքից վերցրած կամ դասարանում արդեն մշակված նյութերը, որոնք ոչ մի նոր բան չեն տալիս երեխային, չեն նպաստում լեզվի և մտածողության զարգացմանը:

Փոխադրության համար սովորաբար առաջադրվում են պատմողական բնույթի նյութեր, որոնցում հաջորդաբար զարգանում է մեկ գործողություն: Սակայն սխալ կլինի հրաժարվել այնպիսի բնագրերից, որոնք նկարագրական բնույթի են: Աշակերտներին առօրյա փորձից ծանոթ կենդանիների, առարկաների ու երևույթների նկարագրությունը հեշտությամբ ընկալվում և նույնքան հեշտությամբ էլ վերարտադրվում է: Փոխադրության բնագրերը շատ ծավալուն ու երկարաշունչ չպետք է լինեն, որովհետև նման նյութերն աշակերտների վրա ուժեղ տպավորություն չեն թողնում, ուստի վերարտադրելիս նրանք շատ բան բաց են թողնում և խառնում են դեպքերի հաջորդականությունը:

Առանձին դեպքերում փոխադրության բնագրերում կարող են ներառվել ուղղագրական այս կամ այն կանոնին վերաբերող բառեր՝ դրանց ուղղագրության յուրացումն ամրապնդելու, աշակերտի ակտիվ բառապաշարի մեջ մտցնելու նպատակով:

Փոխադրության դասը կարող է ունենալ հետևյալ հիմնական բաղադրամասերը.

1. Նախապատրաստական աշխատանք կամ համառոտ զրույց
2. Բնագրի ընթերցում ուսուցչի կամ աշակերտի կողմից
3. Զրույց ընթերցած բնագրի բովանդակության շուրջ
4. Փոխադրության պլանի կազմում կամ պատրաստի պլանի առաջադրում
5. Բառային կամ ուղղագրական աշխատանք
6. Բնագրի բովանդակության բանավոր վերարտադրում և ստուգում

Նախապատրաստական աշխատանք կամ համառոտ զրույց

Նախապատրաստական զրույցի նպատակը բնագրի բովանդակության ու լեզվական կողմի ճիշտ ընկալման ապահովումն է: Եթե բնագիրը թեմատիկայի տեսակետից չի առնչվում ընթերցանությունից երեխաների անցածին, էքսկուրսիային կամ գործնական պարապմունքներին, աշակերտների համար այն դյուրընկալ դարձնելու համար անհրաժեշտ է նախապատրաստական զրույց անցկացնել: Իսկ եթե նյութը թեմատիկայի տեսանկյունից դժվարություն չի ներկայացնում, և առանց զրույցի էլ աշակերտները կարող են այն հեշտությամբ ընկալել, զրույցի կարիք չկա:

Բնագրի ընթերցում

Փոխադրության բնագիրը կարդում է ուսուցիչը՝ հանգիստ, դանդաղ, տրամաբանական դադարների և շեշտերի ճիշտ պահպանումով, պարզ ու հստակ արտասանությամբ, որպեսզի աշակերտները յուրաքանչյուր բառ ու նախադասություն ճիշտ լսեն ու հասկանան, ըմբռնեն ամբողջ բովանդակությունը: Եթե ուսուցիչը ցանկանում է աշակերտների մեջ ինքնուրույնորեն կարդացածից փոխադրելու կարողություն մշակել, հանձնարարում է աշակերտներին լուռ կարդալ բնագիրը, ապա այն բարձրաձայն ընթեցում է ինքը:

Զրույց կարդացածի շուրջ

Բնագրի բովանդակության ընկալումն ստուգելու և ճշտելու համար ընթերցումից հետո անհրաժեշտ է կարդացածի շուրջ զրույց անցկացնել: Դրա համար ուսուցիչը պետք է ընտրի մի քանի ընդհանուր հարցեր (ո՞ւմ կամ ինչի՞ մասին է կարդացածը, որտե՞ղ է կատարվել այդ դեպքը, ե՞րբ է կատարվել, ի՞նչ իմացան աշակերտները նկարագրած առարկայի կամ երևույթի մասին) և, դրանք առաջադրելով աշակերտներին, ակտիվ զրույց կազմակերպի նյութի շուրջ: Եթե բնագիրը առանձին բովանդակություն չունի, զրույցի համար շատ հարցեր տալու հարկ չկա: Առհասարակ պետք է խուսափել ավելորդ մանրամասնություններից, որոնք կարող են ցրել աշակերտի ուշադրությունը:

Փոխադրության պլանի կազմում

Սկզբում պլանը պետք է կազմել միայն հարցերով, իսկ հետո կարելի է օգտագործել նաև պատմողական և անվանական նախադասություններով կազմված պլաններ, որոնք համեմատաբար ավելի բարդ են: Պլան կազմելու համար ամենից

առաջ անհրաժեշտ է կարդացած նյութը բաժանել ամբողջական մասերի և դրանք մաս առ մաս վերլուծելուց հետո վերնագրել: Ընդ որում, նյութի առանձին մասերի վերնագրերն առաջարկում են աշակերտները, և դասարանում անհրաժեշտ քննարկման ենթարկելուց հետո դրանցից հաջողվածները ընտրվում և գրվում են գրատախտակին, որպես պլանի առանձին կետեր: Պլան կազմելու աշխատանքին կարելի է անցնել բնագիրն ընթերցելուց հետո միայն, երբ բնագիրը ծանոթ է աշակերտներին:

Բառային աշխատանք

Յուրաքանչյուր ինքնուրույն գրավոր աշխատանքի ժամանակ բառապաշարի մշակման ուղղությամբ որոշակի աշխատանք է անհրաժեշտ կատարել: Ուսուցիչը պետք է ընտրի փոխադրության առանձին մասերին կամ ամբողջ բնագրին վերաբերող բառեր, բառակապակցություններ և գրելով գրատախտակին՝ հանձնարարի դրանք անպայման օգտագործել փոխադրության մեջ՝ նպատակ ունենալով այդ բառերն աշակերտների ակտիվ բառապաշարի մեջ մտցնել:

Գրատախտակին գրված բառերը, եթե նույնիսկ աշակերտը դրանք չի էլ օգտագործում, որոշոկի ազդեցություն են թողնում աշակերտի վրա և մտքում տպավորվում, ուստի պետք է հետևել, որ դրանք նյութի բանավոր վերարտադրման ժամանակ անպայման օգտագործվեն, որպեսզի ուսուցիչը համոզվի, որ աշակերտները կարող են դրանք տեղին և ճիշտ օգտագործել: Փոխադրության համար ընտրված ամեն մի բնագրում էլ կարող են հանդիպել բառեր ու բառակապակցություններ, որոնց ուղղագրությունն աշակերտները դեռևս չեն անցել: Դրանք պետք է գրել գրատախտակին, որպեսզի աշակերտներն օգտագործեն: Ուղղագրական աշխատանքը փոխադրության դասի ամենահիմնական բաղադրամասերից մեկն է, այն երբեք աչքաթող չպետք է անել:

Բնագրի բանավոր վերարտադրում կամ կրկնաընթերցում

Բնագրի բանավոր վերարտադրումը և կրկնաընթերցումը դպրոցում հավասարապես գործադրվում են՝ նայած նյութի դժվարությանը և աշակերտների զարգացման մակարդակին: Փոխադրության պլանը կազմելուց և անհրաժեշտ բառային աշխատանք տանելուց հետո, ըստ կազմված կամ առաջադրված պլանի, նախ մաս առ մաս, ապա ամբողջովին վերարտադրվում է բնագրի բովանդակությունը: Սակայն հնարավորության դեպքում երբեմն պետք է խուսափել բնագրի բանավոր

վերարտադրումից և աշակերտներին դնել այնպիսի պայմաններում, որ նրանք հակադրված լինեն ինքնուրույն մտածել: Այս դեպքում աշակերտներին կողմնորոշելու համար կարելի է անցկացնել բնագրի կրկնաընթերցում և թողնել, որ գրավոր փոխադրությունը գրեն միանգամայն ինքնուրույն կերպով: Այս երկու ձևերից յուրաքանչյուրի գործադրման ժամանակ ուսուցիչը պետք է ելնի իր դասարանի և նյութի ընձեռած հնարավորություններից:

Բնագրի գրավոր վերարտադրում

5րդ, 6-րդ դասարաններում աշակերտներին կարելի է թողնել, որ ամբողջ բնագիրը միանգամից գրի առնեն: Գրելիս ուսուցիչը առանձին դեպքերում պետք է օգնի աշակերտներին նախադասությունները ձևակերպելու, բառերի ճիշտ ընտրություն կատարելու, ինչպես նաև ուղղագրության հարցում, օգնի լեզվական գրագիտական աշխատանքներում:

Փոխադրության ստուգում

Ինչպես փոխադրության ստուգման, այնպես էլ դասարանական վերլուծության ժամանակ անհրաժեշտ ուշադրություն պետք է դարձնել հետևյալ հարցերի վրա.

- Փոխադրությունն արդյոք համապատասխանում է առաջադրված նյութի բովանդակությանը:
- Բովանդակությունը լրի՞վ է արտադրված, թե՞ կան աղավաղումներ ու բաղթողումներ:
- Ինչպե՞ս է կատարված առանձին բառերի, արտահայտությունների ու լեզվական այլ ձևերի ընտրությունն ու օգտագործումը:
- Ինչպիսի՞ն է աշխատանքի ձևավորումը:

Սովորաբար կիրառվում են փոխադրության հետևյալ տեսակները՝

1. բնագրին հարազատ կամ մանրամասն,
2. համառոտ,
3. ընտրովի,
4. ստեղծագործաբար:

1. **Բնագրին հարազատ կամ մանրամասն փոխադրությունը** հանձնարարելի է բոլոր դասարաններում: Ցածր դասարանում կարելի է գրել մի քանի նախադասությունից կազմված փոքրիկ բնագրեր՝ դրանց ծավալն ու

բովանդակությունը մինչև տարեվերջ աստիճանաբար բարդացնելով: Օրինակ՝ ինչպես առաջին, այնպես էլ մյուս դասարաններում փոխադրությանը նախապատրաստվելիս պիտի տրվեն կողմնորոշիչ հարցաշար և հենակետային բառեր ու բառակապակցություններ, այս ամենը վերաբերում է բանավոր փոխադրությանը:

Միջին դասարաններում փոխադրության շուրջ աշխատանքն աստիճանաբար բարդանում է, որովհետև նախատեսվում են համեմատաբար ընդարձակ բնագրեր, որոնք շարահյուսական, կառուցվածքային իմաստով աշաերտներին անծանոթ են: Միջին դասարանում փոխադրության հարցաշարը աշակերտներն իրենք պիտի կազմեն ուսուցչի օգնությամբ: մեծանում է փոխադրության համար ընտրված բնագրի ծավալը: Համեմատաբար շատանում են կերպարները, դեպքերը, բարդանում է դրանց տրամաբանությունը, հիմնական միտքը, գաղափարը և այլն:

- Բնագրի ընթերցում ուսուցչի կողմից աշակերտների համար (երկու անգամ):
- Ձրույց կամ հարցազրույց փոխադրվող բնագրի բովանդակության շուրջ:
- Անծանոթ և ուղղագրական տեսանկյունից բարդություն ներկայացնող բառերի բացատրություն և գրառում:
- Հարցաշարի կազմում բոլոր աշակերտների մասնակցությամբ:
- Բնագրի շարադրում ըստ հարցաշարի:
- Նյութի գրավոր փոխադրում:
- Ինքնաստուգում:
- Գրավորների հանձնում:

2. **Համառոտ փոխադրությունը** համեմատաբար բարդ է, այդ պատճառով այն ուսուցանվում և անցկացվում է միայն բարձր դասարաններում: Մեթոդական շղթան այսպիսին է՝

- Բնագրի ընթեցում (երկու անգամ):
- Խմբային հարցազրույցի միջոցով ստեղծագործության հիմնական դեպքերի դի-տարկում:
- Փոխադրվող նյութի բառապաշարի ուսումնասիրում:

- Հարցաշարի կազմում աշակերտների ակտիվ մասնակցությամբ:
- 1-2 դրվագի համառոտ պատմում:
- Հարցաշարի կետերին համապատասխան ողջ բնագրի համառոտ պատմում:
- Բնագրի ինքնուրույն համառոտ պատմում և գրառում:

Միջին դասարաններում ավելի ծավալուն է դառնում: Այստեղ հիմականում աշխատանքը հենվում է աշակերտների ինքնուրույնության վրա: Սակայն ունենք մեկ կարևոր հանգամանք. համառոտ փոխադրելիս հաճախ գեղարվեստական բնագիրն աղքատանում է՝ վերածվելով պարզապես փաստերի թվարկության: Այդ երևույթը կանխելու համար աշակերտներին պիտի սովորեցնել ոչ թե բաց թողնել պատահական, իրենց կարծիքով ավելորդ հատվածները, այլ ընդարձակ արտահայտված հեղինակային միտքը հակիրճ ներկայացնել:

3. **Ընտրովի փոխադրության** ուսուցման մեթոդիկան նման է ընդարձակ և համառոտ փոխադրություններին, սակայն փոխադրության այս տեսակը գրելիս երեխաները վերարտադրում են ստեղծագործության միայն մեկ հատվածը. ընտրությունը կատարում է կա՛մ աշակերտը, կա՛մ ուսուցիչն է հանձնարարում ունկնդրել և վերարտադրել միայն իր հանձնարարած հատվածները կամ հատվածը՝ ոչ միայն ընդարձակ, այլև ստեղծագործաբար, վերլուծելով, դատողություններ անելով: Ընտրովի փոխադրությունը կապող օղակ է փոխադրության և շարադրության միջև: Այն իրականացվում է միայն միջին դասարաններում, երբ աշակերտներն ունեն բնագրի շուրջ աշխատելու որոշակի կարողություններ, կարող են բացահայտել թեման, կռահել հիմնական միտքը, դատողություններ անել, հասկանալ ենթատեքստը և այլն:ե

Ըստ Ջ. Գյուլամիրյանի՝ հաշվի առնելով դպրոցականների մտածողության ինքնատիպությունը, խորհուրդ է տրվում փոխադրությունն այնպես անցկացնել, որ այն ընկալվի ոչ միայն լսողական, այլև տեսողական ճանապարհով: Այդ նպատակով առաջարկվում է բնագիրը բաժանել բոլոր երեխաներին կամ ընտրել այնպիսի գրքից, որն ունեն բոլոր երեխաները, այդ թվում դասագրքից: Աշխատանքի ընթացքում միևնույն բնագրի վրա երեխաները աշխատում են ինքնուրույն. գործողությունների հաջորդականությունը հիշելու համար նշումներ են անում, ընտրում են հեղինակային բառերը և այլն: Այսպիսի աշխատանքը հնարավորություն է տալիս ինքնուրույնաբար

ընկալելու բնագիրը, իմաստավորելու այն. առաջին տպավորությամբ դատողություններ անելու դեպքում երեխաները ձեռք կբերեն ստեղծագործությունն ինքնուրույն, ազատ վերլուծելու, համադրելու, հակադրելու կարողություններ: Հարկավոր է նաև բնագիրը դիտարկելու պահին երեխաների ուշադրությունը հրավիրել հեղինակի մտահղացումների, ստեղծագործության կառուցվածքի, լեզվաոճական առանձնահատկությունների վրա:

Աշխատանքի արդյունավետության համար ուսուցման հետագա փուլերում շահեկան է, որ յուրաքանչյուր աշակերտ աշխատի սեփական, անհատական պատրաստի տեքստի վրա, իսկ հետո նոր ընդհանուր աշխատանքի միջոցով կարելի է քննարկել ստացված արդյունքը: Ընդ որում՝ կարևոր է, որ որքան հնարավոր է, շատ աշակերտ մասնակցի քննարկմանը:

Փոխադրության բնագիրը պետք է վերլուծել թե՛ բովանդակային, թե՛ կառուց-վածքային և թե՛ բառապաշարային իմաստով: Որպեսզի այն արդյունավետ լինի և նպատակային, բազմաթիվ առաջադրանքների կատարման կարիք չկա, ավելի լավ է ընտրել դասարանի առանձնահատկություններով պայմանավորված 1-2 վարժություն, որոնք անհրաժեշտ են երեխաների հետ այդ պահին աշխատելիս: Այդ դեպքում աշակերտներն էլ կգիտակցեն իրենց կատարած աշխատանքի նպատակը, այսինքն՝ կհասկանան, թե ինչո՞ւ են կատարում տվյալ վարժությունը, որտե՞ղ է պետք գալու իրենց այն կարողությունը, որը ձեռք են բերելու տվյալ վարժության կատարման արդյունքում:

Ընտրովի փոխադրությունը նման է ընտրովի կարդալուն և պատմելուն, եթե մայրենիի դասերին այս ուղղությամբ հաճախ է աշխատանք իրականացվում, ապա ընտրովի պատմելը բոլորովին դժվար չի լինում: Երբ ընտրովի փոխադրության հատվածն ընտրում է ուսուցիչը, մեթոդական շղթան ունենում է հետևյալ տեսքը.

- Բնագրի ընթացքում ուսուցչի կամ աշակերտների կողմից:
- Բովանդակության վերլուծություն:
- Փոխադրվելիք հատվածի ընտրություն:
- Ընտրված հատվածի վերլուծություն, հենակետային բառերի ընտրություն և դի-տարկում:

- Նյութի բովանդակության վերարտադրում հենակետայի բառերի օգնությամբ:
- Ընտրված հատվածի վերնագրում:
- Բնագրի կիրառում:
- Ինքնաստուգում:
- Գրավորների հանձնում:

4. **Ստեղծագործական են** այն փոխադրությունները, որոնց դեպքում բնագիրը վերարտադրվում է գործող անձերից մեկի անունից, ինչպես նաև պատմողի դեմքի փոփոխումով: Նյութը կարելի է վերարտադրել նաև որպես դեպքին մասնակից կամ ականատես: միջին դասարաններում նպատակահարմար է ստեղծագործական լրացումներով կամ փոփոխություններով փոխադրությունները որոշ նախապատրաստական աշխատանքից հետո նաև հանձնարարել իբրև տնային աշխատանք:

Եզրակացություն

Ամփոփելով մեր ավարտական աշխատանքի շրջանակներում իրականացրած հետազոտության արդյունքները՝ եկանք հետևյալ եզրահանգումներին:

1. Չնայած հիմնախնդրի վերաբերյալ գրականության առկայությանը, այնուամենայնիվ կրտսեր դպրոցականների փոխադրությունների միջոցով կապակցված գրավոր խոսքի զարգացման հիմնահարցը բարելավման կարիք ունի:
2. Կրտսեր դպրոցականների կապակցված խոսքի զարգացման հիմնահարցը կարևորվում է ՀՀ կրթական չափորոշիչում և մայրենիի առարկայական ծրագրում, սակայն փոխադրությունների միջոցով կապակցված գրավոր խոսքի զարգացմանը նվիրված պահանջը բարելավման կարիք ունի:
3. Իրականացնելով դասալսումներ, ուսուցիչների հետ զրույցներ, վերջիններիս շրջանում հարցախույզ, ինչպես նաև իրականացնելով փորձարարական տարբեր դասեր, հայտորոշիչ առաջադրանք և վերլուծելով կատարված աշխատանքների արդյունքները՝ մշակեցինք մեթոդական ցուցումները, որոնք, կարծում ենք, կարող են նպաստել փոխադրությունների միջոցով կապակցված գրավոր խոսքի զարգացմանը:
4. Սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքների և հմտությունների արդյունավետ ու պատշաճ արձագանքելը:
5. Կարողուննակությունների ձևավորմանը հասնելը:

Գրականություն

1. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., Մանկավարժություն, Երևան, 2005:
2. Գյուլամիրյան Ջ., Արտագրությունների, թելադրությունների, փոխադրություն-ների, շարադրությունների ձեռնարկ, Զանգակե, Երևան, 2016:
3. Թորոսյան Կ., Սարգսյան Վ., Խաչատրյան Հ., Մայրենի 2-4: Ուսուցչի ձեռնարկ, 2007:
4. Նալչաջյան Ա., Հոգեբանության հիմունքներ, Երևան, 1997:
5. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, ,Լույսե, Երևան, 1980:
6. Ռուբինա Նազարյան, Թամար Ալեքսանյան, Փոխադրության նյութերի ժողովածու, 2000: